21" 05" 2024թ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /որոշ չափաբաժինների մասով/ լուծելու մասին

<<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ -ի / վերանվանվել է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ / (այսուհետ՝ Գնորդ) և «Ագաստ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.01.2024 թվականին կնքված N Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2 <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ -ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Գնորդը Վաճառողի էլեկտրոնային փոստին 16" 04" 2024թ և 02" 05" 2024թ ծանուցման միջոցով պատվիրել է մատակարարել ստորև ներկայացվող աղյուսակում ներարառված դեղորայքը, սակայն Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում որևէ մատակարարում տեղի չի ունեցել:

Չափաբաժին	Անվանում
1	Ամլոդիպին դեղահատ, 10մգ
4	Ացետիլսալիցիլաթթու դեղահատ, 100մգ
13	Թիմոլոլ + Բրինզոլամիդ ակնակաթիլներ, 6.8 մգ + 10 մգ
16	Լոզարտան + Հիդրոքլորոթիազի դեղահատ, 100 մգ + 25 մգ;
17	Լոզարտան դեղահատ,100մգ,
19	Կալցիում, խոլեկալցիֆերոլ դեղահատեր դյուրալույծ, 500մգ+ 10մկգ,
21	Կարվեդիլոլ դեղահատ, 12.5մգ,
23	Կլոպիդոգրել դեղահատ, 75մգ,
24	Պերինդոպրիլ + Ինդարամիդ դեղահատ, 10 մգ + 2,5 մգ
33	Օմեպրազոլ դեղապատիճ, 20մգ,

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի

«միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վերոգրյալը հաշվի առնելով, Գնորդը որոշում է միակողմանի լուծել Պայմանագիրըէ աղյուսակում նշված չափաբաժինների մասով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն

Վաճառողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 412821 ՀՀ դրամ և 275214 ՀՀ դրամ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի <<Արարատբանկ>>ԲԲԸ-ի 1510036375510100 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ ենթակետի ա/ կետի համաձայն՝ անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Տվյալ դրույթը հաշվի առնելով՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի <<Արարատբանկ>>ԲԲԸ-ի 1510036375510100 հաշվեհամարին փոխանցել վերը նշված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները, հակառակ դեպքում

Վաճառողը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Վաճառողի տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝ Ս" ԲԱԴԱԼՅԱՆ